ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԱՄԵՆԱՊԱՏԻՒ Տ. ՏԵՂԱԿԱԼԻ ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

1911 թ. Մարտ 3, № 1346. առաջադրուեց Ս. Էջմիածնի Սինոդին կազմել Մայր Աթոռի և այլ վանօրէից կալուածների և գոյքերի ինվենտար։

—Մարտ 3, № 1349. առաջադրուեց Նոր Նախիջևանի և Բեսսարաբիայի թեմի Հայոց Առաջնորդին կազմել Հին Խրիմի Ս. Խաչ վանքի համար ժամանակաւոր Վանական Կառավարութիւն Վանահօր նախագահութեամբ և տալ իւր կողմից հրահանգներ։ Սոյն խնդրի առթիւ վանահօրից ստացուած գրագրութիւններն ուղարկուեցին Առաջնորդին աչքի ունենալու համար։

—Մարտ 4, № 1352. առաջադրուեց Վրաստանի Հայոց Կոնսիստորիայի Նախագահողին խիստ հսկողութիւն ունենալ, որպէս զի Տփխիսի հայ քահանաները չստանձնեն մեծաքանակ դասեր զանազան դպրոցներում, որով տուժում է աշակերտութիւնն և զրկւում է բարեպաշտ ժողովուրդը հոգևոր մխիթարութիւնից՝ քահանաների յաճախ և երկար եկեղեցուց բացակայելու պատճառով։

—Մարտ 8, № 1361. առաջադրութիւն Երևանի Հայոց փոխ թեմակալի անունով, որով Աստուածատուր Բարսեղեանը և Աստուածատուր Գէորգեան հաստատուեցին Զանգեզուր գաւառի Գորիսի եկեղեցական ծխական դպրոցի շինութեան հոգաբարձութեան անդամներ։

—Մարտ 13, № 1370. օրհնութեան և գոհունակութեան գիր Մեծ-Ղարաքիլիսեցի պ. Գ. Եդիգարեանի անունով, որ խոստացել է նուիրել իւր ծննդավայրում ծխական դպրոցին կից ստորին գիւղատնտեսական դպրոց բանալու համար 50,000 ռ.։

—Մարտ 13, № 1374. առաջադրութիւն Երևանի Հայոց փոխ թեմական անունով, որով թոյլ տրուեց փոխադրել Եղիշէ վարդապետին Գեղարդայ վանքը վանահայրական պաշտօնով, Մեսրոպ աբեղային նոյն պաշտօնով Գեղարդից Ս. Գրիգոր Լուսաւորչի (Խորվիրապի) վանքն և Ղուկաս վարդապետին վերջինից ուղարկել Երնջակի Ս. Կարապետի վանքն իբրև միաբան։

—Մարտ 14, № 1375. գրութիւն Կ. Պոլսի Հայոց Պատրիարքական Տեղապահի անունով, որով տեղեկութիւն հաղորդուեց հանգուցեալ Ա. Ղուկասեանի կտակի վիճակի մասին և ուղարկուեց հաւատարմագրի պատրաստի միօրինակ ստորագրելու և վերադարձնելու։

—Մարտ 15, № 1385. առաջադրութիւն Երևանի Հայոց փոխ թեմական անունով, որով Զէյվա գիւղի այրուած Կարապետ քահանան հաստատուեց Մողնոյ Ս. Գէորգ վանքի վանահայր՝ յիշեալ փոխ թեմական միջնորդութեան համաձայն։

—Մարտ 21, № 1398. շնորհաւորական, խրախուսական և օրհնութեան գիր Տփխիսի Ներսիսեան թեմական Հոգևոր դպրանոցի ուսուցիչ պ. Միսաք Ասիլեանի ուսուցչական գործունէութեան 25 ամեայ յոբելեանի կատարման առթիւ։

—Մարտ 22, № 1399. առաջադրուեց Ս. Էջմիածնի Սինոդին հրաւիրել մասնագէտ անձինք և խորհրդակցել Խոթայ և Գանձասարի վանքերի կալուածների շահագործման եղանակի մասին։

—Մարտ 12, № 1404. առաջադրութիւն Ղարաբաղի Կինսիստորիայի անունով, որով հաստատուեցին Բալուճա գիւղի եկեղեցական—ծխական դպրոցի հոգաբարձութեան նորընտիր անդամներն և անձնափոխանորդները։

—Մարտ 25, № 1418. առաջադրուեց Մայր Աթոռի Վանական Կառավարութեան տալ օթևան և հոգալ սնունդ և այլ յարմարութիւններ Աղէքսանդրապոլի Արդութեան

դպրոցի բարձր դասարանի 40 աշակերտուհիների, որոնք առաջիկայ ապրիլի 2-ին ժամանելու են Ս. Էջմիածին։

—Մարտ 25, № 1419—1422. շրջաբերականներով առաջադրուեց Վրաստանի Հայոց Կոնսիստորիայի նախագահողին, Ղարաբաղի Կոնսիստորիային, Երևանի Հայոց փոխ թեմակալին և Շամախու Առաջնորդին շրջաբերական կարգադրութիւն անել թեմերի քաղաքների եկեղեցիների երեսփոխների անունով, որպէս զի տարուոյս մայիսի 18-ին հանգանակութիւն կատարեն եկեղեցիներում խուլ և համրերի օգտին և ժողոված գումարները ուղարկեն խուլ և համրերի հոգաբարձութեան Տփխիսի բաժանմունքին։

—Մարտ 28, № 1427. Առաջադրութիւն Ս. Էջմիածնի Սինոդի անունով, որով Տ. Սիօն վարդապետը կարգուեց Մայր Աթոռի հիւրատան հիւրընկալ և Տ. Արիստակէս վարդապետն ազատ համարուեց նոյն պաշտօնից՝ այլ և այլ պաշտօնով և պարտաւորութիւնով ծանրաբեռնուած լինելու պատճառով։

ՔԱՂՈՒԱԾՆԵՐ ՍԻՆՈԴԻ ՕՐԱԳԻՐՆԵՐԻՑ

Մարտի 2-ին, Թ. 139. Սինոդը լսելով Երևանի Կոնսիստորիայի 1910 թ. նոյեմբերի 27-ի, Թ. 8270 յայտարարութիւնը՝ որոշեց. թոյլ տալ Երևանի Կոնսիստորիային ընդունել Աբրահամ Տէր Մինասեանին հոգևոր կոչման մէջ և յանձնարարել Փոխ-Թեմակալին ձեռնադրել նորան քահանայ Տաթևի փոխանորդութիւն Շնաթաղ գիւղի համար։

Մարտի 2-ին, Թ. 140. Սինոդը լսելով Շամախու Կոնսիստորիայի 1910 թ. դեկտեմբերի 30-ի Թ. 1717 յայտարարութիւնը, որոշեց. թոյլ տալ Շամախու Կոնսիստորիային ընդունել Տփխիսի բնակիչ Գէորգ Պոպովեանին հոգևոր կոչման մէջ և յանձնարարել թեմի առաջնորդին ձեռնադրել նրան քահանայ Խաչմազ գիւղի համար։